Տպագրված է 3 օրինակից

Օրինակ --

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի

06/10/2010թ թիվ 16-Լ որոշմամբ

Փոփոխված է 15/10/2010թ թիվ 18 Լ որոշմամբ
17/11/2010թ թիվ 22 Լ որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ

---------- Վաչե Գաբրիելյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
(վերջին փոփոխությունը գրանցված է)
ՀՀ կենտրոնական բանկում

« » _____2010թ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

---------- Արթուր Ջավադյան

ԿԱՆՈՆՆԵՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԲԱԶԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԵՎ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԵՐԻ ԵՎ ՌԻՍԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՉԱՓԸ)

ԵՐԵՎԱՆ - 2010

1. ԱՊՊԱ ոլորտում հիմնական ապահովագրավճարների նվազագույն և առավելագույն սահմանաչափերն են՝ տարեկան համապատասխանաբար 31848 և 33122 ՀՀ դրամը:

2. ԱՊՊԱ ոլորտում բազային ապահովագրավճարների նվազագույն և առավելագույն սահմանաչափերն են՝ տարեկան համապատասխանաբար 19000 և 110000 ՀՀ դրամը:

3. ԱՊՊԱ ոլորտում ռիսկային գործակիցների թույլատրելի չափերն են՝

1) «ավտոտրանսպորտային միջոցի շահագործման տարեկան ինտենսիվություն» ռիսկային գործոնի համար՝ 1,00.

2) «ավտոտրանսպորտային միջոցի տիպ (տեսակ/մակնիշ)» ռիսկային գործոնի համար՝ ըստ ռիսկայնության հետևյալ դասերի՝

ա. մոտոտրանսպորտի համար՝ 0,58.

բ. թեթև մարդատար՝ 1,00.

գ. բեռնատար (ներառյալ բեռնաուղևորատար)՝ 1,12.

դ. ավտոբուս՝ 1,1.

ե. այլ (կցորդ, տրակտոր և այլն)՝ 0,59.

3) «ավտոտրանսպորտային միջոցի շահագործման հիմնական վայր (շրջան)» ռիսկային գործոնի համար՝ 1,00.

4) «ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման ձև (նպատակ)» ռիսկային գործոնի համար՝ ըստ ռիսկայնության հետևյալ դասերի՝

ա. անձնական՝ 1,00.

բ. այլ (ծառայողական, առևտրային օգտագործման, հանրային տրանսպորտ (բացառությամբ երթուղային տաքսիների) և այլն)՝ 1,03, ընդ որում, ավտոբուս (բացառությամբ միկրոավտոբուս), տրոլեյբուս և բեռնատար տեսակի ավտոտրանսպորտային միջոցներն ընդգրկվում են սույն ռիսկայնության դասի մեջ՝ անկախ իրենց օգտագործման ձևից (նպատակից).

գ. տաքսի, վարձակալություն, հանրային տրանսպորտ (երթուղային տաքսիների մասով)՝ 1,44, ընդ որում, մոտոտրանսպորտ և այլ (կցորդ, տրակտոր և այլն) տեսակի ավտոտրանսպորտային միջոցները չեն ընդգրկվում սույն ռիսկայնության դասի մեջ՝ անկախ իրենց օգտագործման ձևից (նպատակից).

«ավտոտրանսպորտային միջոցի հզորություն (շարժիչի ծավալ/քաշ)» ռիսկային գործոնի համար՝ ըստ ռիսկայնության հետևյալ դասերի՝

ա. մինչև 80 (ներառյալ) ձիաուժ՝ 0,80.

բ. 81-140 ձիաուժ՝ 1,00.

գ. 141-230 ձիաուժ՝ 1,27.

դ. 230 ձիաուժից ավել՝ 1,45.

5) «ապահովադրի և (կամ) ապահովագրված անձի տարիք և վարորդական ստաժ» գործոնների համար՝ ըստ ռիսկայնության հետևյալ դասերի՝

ա. մինչև 23 տարեկան և մինչև 3 տարվա վարորդական ստաժ՝ 1,47.

բ. մինչև 23 տարեկան և 3 և ավելի տարվա վարորդական ստաժ՝ 1,36.

գ. 23 և ավել տարեկան և մինչև 3 տարվա վարորդական ստաժ՝ 1,09.

դ. 23 և ավել տարեկան և 3 և ավելի տարվա տարվա վարորդական ստաժ՝ 1,00.

ե. չսահմանափակված շրջանակի լիազորված տիրապետողներ՝ 1,60.

1) ապահովադրի և (կամ) ապահովագրված անձի վթարավտանգության աստիճանի վրա ազդող նրա առողջական վիճակի հետ կապված գործոնների համար՝ 1,00:

4. ԱՊՊԱ սակագնի կառուցվածքում բեռնվածության չափը կազմում է 22-25 %:

5. Մեկ տարի ժամկետով կնքվող ԱՊՊԱ պայմանագրի համար հաշվարկված բազային ապահովագրավճարները կլորացվում են մինչև հազարերորդական նիշ՝ կլորացման նիշ ընդունելով 500-ից մեծ կամ փոքր մեծությունը:

6. Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ անդամ ապահովագրական ընկերություններն իրենց կողմից ԱՊՊԱ ոլորտում կիրառվող ապահովագրավճարների հաշվարկման մեթոդաբանությամբ սահմանում են սակագներ՝

1) մեկ տարի ժամկետով կնքվող ԱՊՊԱ պայմանագրերի համար,
2) մեկ տարուց պակաս ժամկետով կնքվող ԱՊՊԱ պայմանագրերի համար,
3) ապահովագրավճարի տարաժամկետ վճարման կարգ նախատեսող ԱՊՊԱ պայմանագրերի համար:»: